ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

26 հունվարի 2015 թվականի **N 9-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ,ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ կետով, 2011թվականի հոկտեմբերի 20-ի <<Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին>> N 1510-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 52-54 կետերով և համաձայն մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարձրագույն, գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների 2014 թվականի 2-րդ կիսամյակի կատարողականի գնահատականների,**կ ա ր գ ա դ ր ու մ եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարձրագույն, գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին խրախուսել դրամական պարգևատրմամբ՝ 2014 թվականի 2-րդ կիսամյակի արդյունքների հիման վրա, պարգևատրման մեկ միավորի նկատմամբ համապատասխան տոկոսային արտահայտությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել պարգևատրման վճարումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

2015թ.հունվարի 26
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015թ.հունվարի 26-ի
N 9-Ա կարգադրության

Ց Ա Ն Կ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարձրագույն,գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնող խրախուսվող քաղաքացիական ծառայողների

Հ/հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ընդհանուր գնահատա-կանը, %
1.	Թադևոսյան Գրիգոր	աշխատակազմի ղեկավարի տեղակալ	99.3
2.	Սահակյան Սիլվա	աշխատակազմի քարտուղարության պետ	99.43
3	Ավետիսյան Սեյրան	աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ	99.2
4.	Թանգյան Սամվել	աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ	99.1
5.	Ծատրյան Աշոտ	աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ	99.25
6	Միրզոյան Էդուարդ	Ներքին աուդիտի բաժնի պետ	90.8
7.	Վեզիրյան Սուրիկ	Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ	99.23
8	Ղուկասյան Արշակ	Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ	92.94
9	Փիրյան Արտյոմ	Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ	93.83
10	Դոլունց Գայանե	Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ	87.42

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան